ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՄԱՀՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ հայրեր,

Տիկնայք եւ պարոնայք,

Այսօր մենք ոգեկոչում ենք 20-րդ դարի հայ ազգային- եկեղեցական կարկառուն դեմքերից մեկի՝ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի հիշատակը՝ ում կենսագրությունն անցած հարյուրամյակի մեր պատմության յուրատեսակ խտացում է, ում գահակալության շրջանը նշանավորվեց արդյունավետ ու ժրաջան գործունեությամբ, ում շնորհները բազմաթիվ էին, իսկ վարքը վայել էր մեծերին։

Մեծ հայ, հոգեւոր ու ազգային անհատականություն, մտավորական, հայ գրի ու մշակույթի ճշմարիտ նվիրյալ։ Այդպիսին էր վեհափառ Հայրապետը եւ նա կոչված էր այդպիսին լինել՝ դիմագրավելու համար հակասական ժամանակների գլոբալ մարտահրավերներին՝ հայապահպանություն, եկեղեցաշինություն, պայքար ազգային ինքնության ու արժեքների պաշտպանության առաջին դիրքերում, դիմակայություն հանուն հավատքի, հանուն հայ ժողովրդի հարատեւության, հանուն այն ամենի, ինչին նա անվերապահ հավատում ու անմնացորդ ծառայում էր։

Պատմական ճակատագիրը Հայոց հայրապետերին միշտ բաժին է հանել բարդ ու փորձություններով հարուստ իրադարձություններում գործելու առաքելություն եւ նրանից ոչ մեկն իրենից չի վանել այդ պարտավորությունը։ Գարեգին Առաջինը նույնպես անմնացորդ նվիրումով ծառայեց Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն։ Նրա ձեռնարկների հաջողությանը նպաստում էին լայն աշխարհայացքը, մարդկային հմայքն ու իմաստնացնող փորձառությունը։

Արդարեւ, բախտավոր են նրանք, ովքեր պատիվ են ունեցել ճանաչել Վեհափառին, ստանալ նրա օրհնությունը։ Ես այն բախտավորներից մեկն եմ, ով ճանաչել է Գարեգին Առաջինին մինչեւ Ամենայն Հայոց կաթողիկոս օծվելը, երբ նա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն էր։

Կարելի է երկար խոսել վեհափառի վաստակի մասին, եւ մանավանդ խոստովանել, որ մենք դեռ պարտք ունենք հատուցելու նրա թողած հարուստ ժառանգությանը։ Մեզանում նա կմնա որպես իմաստուն ու նվիրյալ հայրապետ, օտարների համար՝ որպես էկումենիկ շարժման, քույր եկեղեցիների հետ համագործակցության ու երկխոսության խորացման ջատագով, մեծ հաշվով՝

որպես հզոր կամքի ու ոգու տեր անհատականություն, ում պայքարի անդաստանը հոգեւոր ծառայությունն էր։

Նա թողեց մեզ դասեր, որ պետք է քաղել Գարեգին Առաջին հայոց հայրապետի օրինակից։

Առաջինը՝ մեր միասնության դասն է։

Անձնական օրինակով Վեհափառը փաստեց Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միասնականությունը՝ առաջնորդվելով «մեկ ազգ, մեկ եկեղեցի» սկզբունքով։

Միասնականություն, որ եղել եւ մնում է մեր համազգային նպատակներին հասնելու հիմնական բանալին։ Որպես ազգ, որպես հասարակություն մենք չենք կարող մեզ թույլ տալ մասնատված լինելու «շքեղությունը»։

Մենք չենք կարող լինել տարանջատ եւ անհաղորդ միմյանց հոգս ու ցավի նկատմամբ։ Եվ սա տեսական բանաձեւում չէ, այլ կենսական պահանջ՝ թելադրված մեր եկեղեցու եւ հասարակության վիճակով, երբ Գարեգին Առաջին հայրապետը ստանձնում էր հայոց հովվապետությունը։

Վեհափառի թողած երկրորդ դասը. յուրաքանչյուրս մեր երկրի ու ժողովրդի համար անելիք ունենք։

Մի առիթով նա վկայակոչեց ԱՄՆ նախագահ Քենեդու հայտնի խոսքը. մի հարցրու, թե երկիրն ի՞նչ է արել քե՛զ համար, այլ հարցրու, թե ի՞նչ ես արել դո՛ւ երկրիդ համար։ Այո, երկիրը յուրաքանչյուր քաղաքացու համար անելիք ունի, պետությունը պատասխանատու է իր քաղաքացիների առջեւ, սակայն այդ պետությունը մեզնից յուրաքանչյուրն է, որ հենց մեզնից յուրաքանչյուրի հոգածության ու զորակցության կարիքն ունի։

Ամեն օր պետականության ու հավատի կառույցին մի աղյուս ավելացնելով է ամրապնդվում մեր պետությունը, ինչպես սուրբ ավազանում մկրտված յուրաքանչյուր հայորդի ամրապնդում է մեր եկեղեցին։

Երրորդը՝ սեր ազգային արժեքների, մեր մշակույթի ու դպրության նկատմամբ։

Նվիրյալ հայրապետի բազմակողմանի շնորհներից հիմնականը մշակույթի եւ գրի հանդեպ ունեցած արտակարգ հետաքրքրությունն էր։

Նա համոզված էր, որ ազգի հոգեւոր անվտանգությունը խարսխվում է մեր մշակույթի ու դպրության վրա։ Վեհափառը եղել է գրահրատարակության, հայ գրքի ու արժեքների քարոզչության դիրքերում։ Այսօր մենք ունենք նույն խնդիրը՝ այնպես

անել, որ նոր սերունդը վերադառնա դեպի ընթերցանություն, որ գիրքը դառնա յուրաքանչյուրի կյանքի ու կենցաղի բաղադրիչը։

Չորրորդ դասը անսահման բարության ու քրիստոնեաբար ապրելու պատգամն է.

«Մտածէ պահ մը»,-ասում էր Վեհափառը, «որ ասածդ խոսքերը այնպիսին լինեն, որ քեզ վերադառնան ուրիշին պատճառված երջանկության խնդությամբ»։

Այսպես ապրեց եւ գործեց Գարեգին Առաջին վեհափառը, այդպիսին կմնա երախտագետ սերունդների հիշողության մեջ։

Եվ հարկ է, որ մեր երախտագետ սերունդն ապրի հոգելույս հայրապետի մշտանորոգ հորդորով. «Քայլ պահենք աշխարհին հետ, առանց սակայն, մեր ճամբէն դուրս գալու»։